«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Գործնական աշխատանքների իրականացումը առարկայի դասավանդման ընթացքում

Առարկան՝ հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Շուշանիկ Մնացականի Կուրղինյան

Ուսումնական հաստատություն՝ ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոց

Երևան 2022

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն …… 3

Գործնական աշխատանքների բնութագրումը, դասակարգումը և գնահատումը. 6

Գործնական աշխատանքների կարևորումը և ներմուծումը ուսումնական գործընթաց …… 11

Գործնական աշխատանքների բազմազանությունը՝ պայմանավորված միջավայրի և առարկայական առանձնահատկություններով …… 14

Եզրակացություններ, առաջարկություններ …… 18

Օգտագործված գրականության ցանկ …… 20

Ներածություն

Հանրակրթության կազմակերպման գործընթացում ուսուցման և ուսումնառության բարելավումը մեծապես պայմանավորված է ինչպես ավանդական մեթոդների և գործիքակազմի ճիշտ կիրառմամբ, այնպես էլ նորագույն մոտեցումներով: Գործնական աշխատանքի ներդրումը և կիրառումը Հայաստանի հանրակրթության ոլորտում ունի համեմատաբար կարճ պատմություն: Հենց միայն «գործնական աշխատանք» եզրույթը միայն վերջին տասնամյակում է մուտք գործել հայ մանկավարժական պրակտիկա: Սովորողների կողմից կատարվող որոշակի աշխատանքներ, որոնք իրենց տեսակով և բնույթով բնավ էլ նորություն չէին, որոշվեց համախմբել մեկ կարգի անվան մեջ և նախատեսել գնահատում այդ աշխատանքների համար: Նախնական փուլում գործնական աշխատանքը հանրակրթություն մտցվեց առանց հստակեցման, սահմանման և գնահատման հստակ չափանիշների ձևակերպման: Այսօր էլ գործնական աշխատանքը միանշանակ չի ընկալվում

ուսուցչական հանրության և սովորողների կողմից։ Գործնական աշխատանքի անցկացումը, կազմակերպումը և գնահատումը թողնվում է ուսուցչի հայեցողությանը՝ ընձեռելով նրան այն իրականացնելու լայն հնարավորություններ։

Աշխատանքի կարևորությունը։ Մեր հասարակությանը այսօրվա դպրոցից ակնկալում է այնպիսի կրթություն և ուսուցում, որը հնարավորություն կտա այն արդյունավետ համապատասխանեցնելու արագ զարգացող գիտատեխնիկական առաջընթացին։ Տեսական գիտելիքներն ու մտածողությունը դեռևս բավարար հիմք չեն դրանք կիրառել կարողանալու հարցում, երբ պահանջվի լուծել այս կամ այն խնդիրը, որն առաջադրելու է կյանքը։ Փաստ է, որ մեր հանրապետության դպրոցներում շարունակվում է պահպանվել ուսուցման ավանդական համակարգը։ Իսկ ավանդական ուսուցման բովանդակությունը և մեթոդները հիմնված են էմպիրիկ մտածողության կանոնների վրա, որն այնքան էլ արդյունավետ, ռացիոնալ ճանաչողության ձև չէ։ Ներկայումս, երբ տեղի է ունենում ուսումնական համակարգում տեսական գիտելիքների կշռի բարձրացում, երբ գիտատեխնիկական առաջընթացը պահանջում է մեզանից կարճ ժամանակահատվածում փոխանցել շատ ընդհանրացված գիտելիքներ, ուսուցման ավանդական համակարգը չի կարողանում ապահովել դպրոցում տված գիտելիքի և կյանքի կողմից առաջ քաշված խնդիրների համապատասխանեցումը։ Այս համատեքստում գործնական աշխատանքի ներդրումը առաջին քայլն է սովորած տեսական նյութը վերածելու գործնականի։ Գործնական աշխատանքի կիրառումը ուսումնական գործընթացում դեռևս չի ծառայում իր նպատակին, քանի որ կան այն հստակեցնելու, դասակարգելու և գնահատման գործող սանդղակին հարմարեցնելու խնդիրներ։ Հաճախ համացանցից արված պարզ վերարտադրությունը ռեֆերատի տեսքով դիտարկվում է որպես գործնական աշխատանք, և ցավով պիտի արձանագրել, որ որոշ ուսուցիչներ հենց սա էլ պատկերացնում են գործնական աշխատանք։ Արդյունքում գնահատվում է մի աշխատանք, որը չի արտացոլում սովորողի և ոչ մի կարողունակություն կամ հմտություն։ Ուստի շատ կարևոր է նախ սովորեցնել ուսուցչին՝ ինչպես կազմակերպել

գործնական աշխատանքը։ Գործնական աշխատանքի հանձնարարումը պահանջում է լուրջ նախապատրաստում, մեկնաբանություն և հիմնավորում։ Գործնական աշխատանքի բովանդակությունը, բնույթը և գործառույթները չի կարելի դիտել դասի վարման եղանակից, ձևից, մեթոդներից, առարկայական չափորոշչային պահանջներից կտրված։ «Պետք չէ երեխայի վրա գիտելիքի հեղեղ տեղալ, դասի ընթացքում հարկավոր չէ ուսումնասիրվող նյութի մասին տալ այն ամենը, ինչ գիտի ուսուցիչը, քանզի գիտելիքի հեղեղում կարող է անհետանալ երեխայի հարցասիրությունն ու հետաքրքրասիրությունը»[1],– խորհուրդ էր տալիս ականավոր մանկավարժ Վ. Սուխոմլինսկին։ Գործնական աշխատանքի իրականացումը գիտելիքի ստուգումից զատ կոչված է բավարարելու սովորողի հետաքրքրություններն ու նախասիրությունները։ Անհրաժեշտը, պիտանին, հետաքրքիրն ու հաճելին պիտի մեկտեղվեն գործնական աշխատանքի կատարման ժամանակ։ Ինչպե՞ս դա իրականացնել և ի՞նչ միջոցներով։ Արտերկրի առաջավոր փորձի և ազգային դպրոցի առանձնահատկությունների ուսումնասիրությունը թույլ կտան օժտված մանկավարժներին գործնական աշխատանքը իրապես կիրառելու արդյունավետ ու նպատակային։ Այսպիսով, հետազոտական աշխատանքի թեման կարևորվում է նրանով, որ գործնական աշխատանքի իրականացումը առարկայի դասավանդման ընթացքում մեզանում դեռևս չի ընթանում համակարգված ձևով, քանի որ կան բազմաթիվ բացթողումներ, ոչ պատշաճ հետևողականություն ու վերահսկողություն։ Լինելով ընթացիկ գնահատման արդյունավետ տեսակ՝ գործնական աշխատանքը սովորողի և ուսուցչի գիտակցության մեջ դեռևս չի ամրագրվում իր տեսակարար կշռով ու անփոխարինելի դերով։

Աշխատանքի նպատակը։ Հետազոտական աշխատանքը հետապնդում է հետևյալ նպատակները.

---

[1] Վ. Սուխոմլինսկի, Խորհուրդներ ուսուցչին, «Լույս», Երևան, 1975թ.։

1. Հիմնավորված ներկայացնել գործնական աշխատանքի կարևորությունը և ընդգծված արդիականությունը առարկայի դասավանդման ընթացքում։

2. Անդրադառնալ այն հանգամանքներին, թե ինչ ուսումնական առաջադրանքներ է լուծում գործնական աշխատանքի կիրառումը դասապրոցեսի ընթացքում և ինչ խթան է այն հանդիսանում կենսական խնդիրների լուծման հարցում։

3. Ընդլայնել գործնական աշխատանքի՝ արդեն գոյություն ունեցող դասակարգումը, առաջարկել գործնական աշխատանքների անցկացման բազմազան տարբերակներ՝ ելնելով առարկայի առաջադրած պահանջներից և հնարավորություններից։

4. Առաջարկել գործնական աշխատանքների գնահատման նոր չափանիշներ և մոտեցումներ։

Գործնական աշխատանքի բնութագրումը, դասակարգումը և գնահատումը

Գաղտնիք չէ, որ որ սովորողի համար այն տեղեկույթն է դառնում գիտելիք և ամրակայվում որպես համոզմունք, ինչը նրա կողմից ձեռք է բերվում ինքնուրույնաբար և գիտակցված։ Գիտելիքների նախնական ընկալման ամենաարդյունավետ կազմակերպման պայմաններում անգամ անհրաժեշտ է հնարավորություն ընձեռել սովորողին դրանք ինքնուրույն ամրակայելու համար։ Եթե դասանյութի նախնական յուրացումը կարող է կատարվել բոլոր սովորողների համար ընդհանուր ուսուցման կազմակերպման պայմաններում, ապա հետագա աշխատանքը պետք է ընթանա անհատապես և այն ծավալով ու բովանդակությամբ, ինչը յուրաքանչյուր սովորողի անհրաժեշտ է նյութի լրիվ ու կայուն յուրացման համար։ Դա հնարավոր է հիմնականում դասից դուրս, անհատական ինքնուրույն աշխատանքի միջոցով, որի կազմակերպման լավագույն եղանակներից է գործնական աշխատանքը։ Ստորև ներկայացնում ենք գործնական աշխատանքի մի քանի բնութագրումներ։

Բնութագրումը: Գործնական են անվանվում սովորողների կողմից կատարվող այն աշխատանքները, որոնք վերաբերում են նրանց ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների գործնական կիրառություններին (ենթադրվում է նաև չափիչ սարքերի կամ համակարգչի կիրառություն)։ Գործնական կարող են համարվել այն աշխատանքները, որոնց կատարման համար թուղթ ու գրիչից բացի օգտագործվում են նաև այլ միջոցներ։ Գործնական աշխատանքներ են ուսումնական փորձերն ու լաբորատոր աշխատանքները, մոդելների, ձևանմուշների, մանրակերտերի (մակետների), պաստառների, սահիկաշարերի պատրաստումը, տեսաֆիլմերի, էլեկտրոնային ներկայացումների, ստենդների ներկայացումը, ցերեկույթների կազմակերպումը և այլն։ Գործնական կարող է համարվել ինչպես պարզ վերարտադրողական աշխատանքը, այնպես էլ ստեղծագործական, հետազոտական լուրջ աշխատանքը։ Վերոնշյալից արդեն պարզ է դառնում, որ գործնական աշխատանքները բազմազան են՝ պաստառի ձևավորումից մինչև էքսկուրսիայի ընթացքում տեսածի ու լսածի ներկայացում աղյուսակի, ֆիլմի, ակնարկի տեսքով, երգի հորինումից մինչև նախագծի իրականացում, դրա արդյունքների ներկայացում ու կիրառում։ Նշված գործնական աշխատանքները կարող են իրականացվել ինչպես անհատապես, այնպես էլ խմբային աշխատանքի շրջանակում, դպրոցում, տանը կամ այլ վայրում, գնահատվել միավորով կամ բառային բնութագրումներով։ Արդյունքները կարող են ներկայացվել սովորողի կամ սովորողների խմբի ընտրությամբ՝ նպատակից ելնելով։ Առհասարակ գործնական աշխատանքի բնութագրումը բավականին ծավալուն է և կարող է իր մեջ ներառել նորանոր տարրեր ու բնութագրիչներ։ Մեր կողմից գործնական աշխատանքը սահմանվում է հետևյալ կերպ։ **Դասի թեմային ուղղակի կամ անուղղակի առնչվող այն նյութը, որը սովորողը կարող է ներկայացնել միայնակ կամ խմբային, և որն ունի տեսանելի վերջնարդյունք, կոչվում է գործնական աշխատանք**։ Հնարավոր չէ ապահովել վերջնական ցուցակ, թե որը կարող է համարվել գործնական աշխատանք,

որը՝ ոչ: Բայց եթե աշխատանքն ունի հետևյալ բնութագրիչներից մեկը կամ մի քանիսը, կարող է համարվել գործնական աշխատանք:

1. Աշխատանքի թեման սերտորեն առնչվում է ուսումնական նյութին, և այն ներկայացնելիս նկատելի են ինքնուրույնության տարրեր:

2. Կատարած աշխատանքը ձևավորում է տեղեկույթ որոնելու և այն ընտրելու հմտություններ:

3. Վեր է հանում ստեղծագործական, հետազոտական ընդունակություններ:

4. Զարգացնում է այնպիսի որակներ, ինչպիսիք են քննադատական մտածողությունը, համագործակցային կարողությունները, ինքնուրույնությունը, ոչ ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու և վճիռներ կայացնելու հմտությունները:

Դասակարգումը: Գործնական աշխատանքներ կիրառվում են բոլոր ուսումնական առարկաների շրջանակում՝ անպայմանորեն կառուցելով առարկայի չափելի վերջնարդյունքների վրա, ինչն էլ պայմանավորում է առաջադրանքի և աշխատանքի տեսակի ընտրությունը:

Գործնական աշխատանքների դասակարգման հիմքում դրվում է սովորողի գործունեության ձևը, և ըստ այդմ՝ գործնական աշխատանքները բաժանվում են 3 խմբի՝

- *վերարտադրողական*, որոնք հնարավորություն են տալիս ցուցադրելու՝ ինչ է սովորել և ինչ է կարողանում անել սովորողը (օրինակ՝ քարտեզի վրա ցույց տալ քաղաքներ, գետեր, լճեր, որոշ սարքերի գործառույթների իմացություն, դրանցից պարզագույնների հավաքման կարողություն և օգտագործում փորձ կատարելիս և այլն),
- *մասամբ որոնողական*, երբ սովորողը պետք է ոչ միայն ցույց տա՝ ինչ է սովորել և ինչ է կարողանում, այլև կատարի լրացումներ, լուծի իրեն առաջադրված

խնդիրը (օրինակ՝ տրված տեղանունները, գետերը, լճերը և այլն պայմանական նշաններով պատկերել քարտեզի վրա),

- *ստեղծագործական*, երբ սովորողը ինքը պետք է ինքնուրույն կամ խմբի անդամների հետ լուծում գտնի առաջադրված խնդրի համար՝ ցուցադրելով կարողունակությունների զարգացման որոշակի մակարդակ (օրինակ՝ կազմել տեղանքի քարտեզը, ինչի համար սովորողը պետք է դրսևորի ոչ միայն մեկ, այլ մի քանի առարկաների, այլև վերառարկայական հմտություններ):

Կարելի է այս դասակարգումը փոխակերպել մակարդակների, ինչը կապահովի ընկալման մատչելիություն և հեշտ ներկայացում:

Առաջին մակարդակ (վերարտադրողական)-օգտագործվում են հիշողություն պահանջող առաջադրանքներ: Ստուգվում և գնահատվում է նյութի իմացությունը և այն որչափ հիշելու ունակությունը:

Երկրորդ մակարդակ (մասամբ որոնողական)– օգտագործվում են առաջադրանքներ, որոնց կատարման համար հիշողությունից բացի պահանջվում են լարված մտավոր գործունեություն և գիտելիքը կիրառելու հմտություն:

Երրորդ մակարդակը (ստեղծագործական)– օգտագործվում են այնպիսի առաջադրանքներ, որոնց կատարման համար պահանջվում են տրամաբանություն, վերլուծություն, համեմատություն, դասակարգում, ընդհանրացում:

Գնահատումը: Բավականին դժվարություններ կան՝ կապված գործնական աշխատանքի գնահատման հետ: Այստեղ չկան հստակ սահմանված մոտեցումներ. գործնական աշխատանքի գնահատումը կատարվում է խիստ սուբյեկտիվ: Հատկապես խմբային գործնական աշխատանքները գնահատելիս դժվար է պահպանել օբյեկտիվությունը: Մեկ ուրիշ դժվարություն է և այն, որ ոչ դասարանում կատարվող գործնական աշխատանքները դժվար վերահսկելի են, և մեզանում ամրագրված պրակտիկա է, երբ ծնողները կամ մեկ այլ անձ,

աշխատանքը կատարում են սովորողի փոխարեն։ Սրանք ևս հավելյալ խնդիրներ են այն ուսուցչի համար, ով ուզում է տեսնել ինքնուրույն կատարված աշխատանք։ Կարելի է կիրառել գնահատման երկու մոտեցում։

1. Դասակարգման յուրաքանչյուր մակարդակի համար սահմանել գնահատման համապատասխան սանդղակ և առաջադրանքների տեսակների հստակեցում։ Օրինակ՝ **առաջին մակարդակի** աշխատանքները կարող են գնահատվել 4–6 միավոր, երկրորդ **մակարդակինը՝** 7–8, **իսկ երրորդ մակարդակինը՝** 9–10 միավոր։ Սովորողին պիտի տրամադրել թերթիկ, որտեղ հստակ գրված են առաջադրանքի անունը և դրան տրվող առավելագույն և նվազագույն միավորները։ Ինչպես թեստը ունի որոշակի կառուցվածք և գնահատման թափանցիկություն, այնպես էլ պիտի հասնել նրան, որ գործնական աշխատանքը ևս գնահատվի հնարավորինս օբյեկտիվ։

2. Գործնական աշխատանքները գնահատել ոչ թե միավորային եղանակով, այլ իրականացնել գնահատում՝ ըստ դրանց քանակի և որակի։ Գնահատման այս մոտեցման ժամանակ սահմանվում է գործնական աշխատանքների անցկացման տարեկան քանակ։ Առհասարակ գործնական աշխատանքները կարելի է ծրագրել և կազմել տարեսկզբին ուսումնական պլանի հետ միաժամանակ։ Ուսուցիչը սեպտեմբերին հանձնարարում է գործնական աշխատանքներ, որոշվում են դրանց կատարման և հանձնման ժամկետները։ Նախընտրելի է մշակել բնութագրական գնահատականներ գործնական աշխատանքի համապատասխան մակարդակների համար։ Առաջին մակարդակի աշխատանք– **խրախույս**, երկրորդ մակարդակ– **գովասանք**, երրորդ մակարդակ– **պարգև**։ Այս բնութագրական գնահատականները ձեռք են բերում տեսակարար կշիռ և որպես առանձին բաղադրիչ տեղ են գտնում տարեվերջյան գնահատման սանդղակում։ Օրինակ՝

հայոց լեզու

1–ին կիսամյակ	2–րդ կիսամյակ	տարեկան

7 8 8

1 խրախույս, 2 պարգև

Դպրոցն ավարտելիս սովորողի գործնական կարողությունները եղած բնութագրական գնահատականների հիման վրա ձեռք են բերում միավորի տեսք՝ ըստ նախապես մշակված գնահատման սանդղակի։

Հատկապես հոսքային ուսուցմամբ ավագ դպրոցներում պետք է մեծ ուշադրություն դարձնել գործնական աշխատանքների կազմակերպմանն ու անցկացմանը։ Հոսքային դասարաններում սովորողի նախասիրությունները որոշակի են, գիտելիքը ձեռք է բերվում ավելի նպատակային, և գործնական աշխատանքը մասնագետ դառնալու ճանապարհին առաջին քայլն է։ Եթե միջին դասարաններում գործնականները հիմնականում ծառայում են սովորածը ամրապնդելուն, հմտություններ ձեռք բերելուն, ապա ավագ դպրոցում դրանք իրենց կատարման պահանջներով պիտի լինեն ավելի բարդ և ստուգեն ոչ միայն հիշողությունը, այլև ստեղծագործական մոտեցումը։ Այսպիսով, գործնական աշխատանքի գնահատման գործող եղանակը բավականին սուբյեկտիվ է. չկա որոշակիություն, և այն կարիք ունի համակարգման ու վերանայման։

Գործնական աշխատանքների կարևորումը և ներմուծումը ուսումնական գործընթաց

Սովորողների գործնական աշխատանքի կազմակերպումը ուսումնական գործընթացի դժվարին խնդիրներից է։ Դրա արդյունավետությունը պայմանավորված է աշխատանքի խելամիտ կազմակերպմամբ, իսկ բովանդակության ճիշտ ընտրության դեպքում հնարավոր է լուծել մանկավարժական լուրջ խնդիրներ։ Գործնական աշխատանքը կարևոր միջոց է աշակերտների կողմից գիտելիքների, հմտությունների և կարողությունների յուրացման ու ամրապնդման համար։ Այն կարող է ուղղված լինել.

1. նոր ուսումնական նյութի յուրացմանը,

2. սովորած նյութի կրկնությանն ու ամրակայմանը,

3. դասի ընթացքում ձեռք բերած գիտելիքների գործնական կիրառմանը,

4. ճանաչողական և հետազոտական ակտիվության խթանմանը։

Գործնական աշխատանքներն իրենց ծավալով ու քանակով պետք է լինեն չափավոր։ Դրանց ծավալի և հաճախականության ավելացումը բացասաբար է անդրադառնում կատարած աշխատանքի որակի վրա։ Անհրաժեշտ է ճիշտ կազմակերպել գործնական աշխատանքների հանձնարարումը՝ հաշվի առնելով տարիքային խումբը, դասարանի հնարավորությունները, սովորողների ծանրաբեռնվածությունը և հազար ու մի այլ հանգամանքներ, որոնք կարող են ինչպես օգնել գոհացուցիչ արդյունք ստանալու համար, այնպես էլ խանգարել։ Օրինակ՝ տարվա եղանակների առանձնահատկությունները, դպրոցական արձակուրդները, օրացույցային նշանավոր տարեթվերը, քաղաքական, տնտեսական իրավիճակների կտրուկ փոփոխությունը, արտակարգ իրադրություններում հայտնվելը և շատ այլ գործոններ որպես խթան օգտագործելով՝ ուսուցիչը կարող է կազմակերպել անհատական կամ խմբային գործնական աշխատանքներ, որոնք արագ կարձագանքեն տվյալ իրավիճակին։ Այս պարագայում մեծանում է սովորողի անձնական հետաքրքրությունը, սեփական անձը կարևորելու փաստը և, ինչու ոչ, որևէ օգտակար գործ կամ վերլուծություն անելու հնարավորությունը արագ արձագանքի և գնահատվելու հնարավորության տեսքով։ Մեր կողմից առաջարկվում են գործնական աշխատանքի որակը բարելավող մի շարք դրույթների կիրառում, որոնք կբարձրացնեն գործնական աշխպատանքի թե՛ դերը և թե՛ որակը։ Այսպիսով, գործնական աշխատանքները հանձնարարելիս և կազմակերպելիս պետք է հաշվի առնել հետևյալ հանգամանքները և կիրառել նշված դրույթները.

1.Սովորողին բերել այն համոզման, որ գործնական աշխատանքը տեսական **գիտելիքը ամրակայելու** և այն **ինքնուրույն կիրառելու** հնարավորություն է։

2. Սովորողին տալ գործնական աշխատանքի տեսակի, բնույթի, կատարման ձևի, ներկայացման ժամկետների **ընտրություն:** Սեփական ընտրության պարագայում սովորողի մոտ բարձրանում է պատասխանատվության զգացումը: Նախ ապահովել բազմազան ընտրություն, ապա աջակցել սովորողին և խրախուսել նրա ընտրությունը:

3. Ապահովել **մրցակցային պայմաններ:** Գործնական աշխատանքի անհատական կամ խմբային կատարման համար կարող է խթան հանդիսանալ նաև մրցակցային դաշտի ապահովումը: Նույն բնույթի գործնական աշխատանք կարելի է հանձնարարել մի քանի խմբերի և կազմելով մրցատյան գնահատել դրանք: Ուստարվա ընթացքում երկարաժամկետ նախապատրաստում պահանջող գործնական աշխատանքների համար մրցույթային ձևաչափով ներկայացնելը և գնահատվելը լավագույն տարբերակներից մեկն է:

4. Գործնական աշխատանքը կազմակերպել խմբի կամ անհատ սովորողի **նախասիրություններին համապատասխան՝** նախապես տեղեկանալով դրանց: Երբ ուսուցիչը հետաքրքրված է աշակերտի անձով, դա շոյում է սովորողի ինքնասիրությունը, և այս հանգամանքը ևս կարելի է ազդակ դարձնել գործնական աշխատանքի ճիշտ կազմակերպման համար: Այն, ինչ արվում է հաճույքով և նպատակային, ապահովում է լավ արդյունք:

5. Գործնական աշխատանքը կազմակերպելիս և հանձնարարելիս լավագույնս կարելի է օգտագործել **միջառարկայական կապերը:** Կան աշակերտներ, որոնք հետաքրքրված չեն հայոց լեզու առարկայով, բայց սիրում են աշխարհագրություն կամ սակավ գիտելիքներ ունեն քիմիայից, բայց կենսաբանությունից պատրաստված են բավարար չափով: Մի առարկայի լավ իմացությունը կամ հետաքրքրվածությունը կարելի է օգտագործել՝ կազմակերպելու մյուսից հանձնարարվող գործնականական աշխատանքը: Չկան իրար հետ ընդհանրապես չառնչվող առարկաներ, չկան չխաչվող հետաքրքրություններ: Պարզապես պետք է լինել հմուտ մանկավարժ՝ համատեղելու հետաքրքրասիրություններն ու նախասիրությունները՝ հստակեցնելով նպատակը:

Հետազոտական աշխատանքի համապատասխան բաժնում մենք կբերենք նման գործնականների օրինակներ։

6. Գործնական աշխատանքը կազմակերպել՝ **նախապես** առանձնացնելով **տարբերակված գնահատում՝** ցածր միավոր (4–5), միջին միավոր (6–8), բարձր միավոր (9–10)։ Նման մոտեցումը ենթադրում է հեշտ ու պարզ, միջին բարդության և դժվար պահանջներով գործնականներ։ **Այս ձևով հանձնարարվող գործնականի վերջնարդյունքը պիտի սահմանվի հստակ**։ Ի՞նչ է տալիս այսպիսի մոտեցումը։ Սովորողը ինքն է գնահատում իր հնարավորությունները, ցանկությունը, իսկ իր կարողությունները գերագնահատելու պարագայում անձամբ է համոզվում, որ ձեռնամուխ է եղել իր ուժերից վեր աշխատանքի։

7. **Ոչ սովորողների ներգրավմամբ (ընդլայնված կազմով)** գործնականները մեր կողմից մտածված գործնականի տեսակ են։ Այս գործնական աշխատանքները ենթադրում են ոչ սովորող անձի (այն չի կարող լինել ուսուցիչը) ներգրավում, ով կունենա հստակ դերակատարում կամ առաջնորդող դեր։ Սովորողը կարող է ընտրել որևէ մասնագետի, արհեստավորի, մտավորականի, հարազատ անձի՝ նշելով նրա տվյալները և հստակեցնելով նրա գործառույթները։ Այստեղ կարևորվում են համագործակցությունը, փորձի փոխանակումը, խմբային աշխատանքը։

8. **Համատեղող** գործնական աշխատանքները ենթադրում են այնպիսի առաջադրանքներ, որոնց կատարման ժամանակ սովորողը որոնումներ է կատարում որևէ բնագավառում, օրինակ՝ հայոց լեզու և լրագրություն, գրականություն և կինո, պատմություն և քաղաքականություն, ֆիզիկա և կենցաղային տեխնիկայի օգտագործում, քիմիա և գյուղատնտեսություն։ Կարելի է մտածել շատ հետաքրքիր աշխատանքներ թե՛ կարճաժամկետ և թե՛ երկարաժամկետ գործնականների համար։

Հարց է առաջանում ։ Այդ դեպքում ինչպե՞ս վարվել, ինչպե՞ս ուսուցանել, որ դպրոցում տված գիտելիքը հիմք հանդիսանա տեսական մտածողության ձևավորման և զարգացման համար։ Եվ արդյոք կփոխվի աշակերտի մտածողության բնույթը, եթե

փոխենք ուսուցման տիպը և այն կազմակերպենք տեսական ընդհանրացումների տեսության դրույթների համապատասխան: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի էությունը բացահայտելու համար անհրաժեշտ է կատարել հատուկ վերլուծություն, այսինքն՝ գտնել այդ առարկայի համար ելակետային հասկացությունները և այդ հասկացությունների մեջ բացել հիմնական հակասությունները, ապա փնտրել դրանք լուծելու եղանակները:

Գործնական աշխատանքների բազմազանությունը՝ պայմանավորված միջավայրի և առարկայական առանձնահատկություններով

Դպրոցական առարկայացանկը մեզանում բավականին հագեցած է ու բազմազան: Հագեցած են նաև ծրագրերը, դասագրքային նյութը, և ուսումնական գործընթացի համար նախատեսված ժամանակահատվածը հիմնականում ծառայում է գիտելիքի տեսական մասի մատուցմանն ու սովորողների կողմից դրա յուրացմանը: Գործնական աշխատանքների իրականացումը առարկայի դասավանդման ընթացքում կազմակերպելիս կարևորվում և հաշվի են առնվում երեք հանգամանք.

1. սովորողի առանձնահատկությունները (տարիք, ընդունակություն, նախասիրություն և այլն)

2. դասավանդվող առարկայի առանձնահատկությունները (բնագիտական, հումանիտար)

3. միջավայրի առանձնահատկությունները (գյուղ, քաղաք, դպրոցի նյութատեխնիկական բազա և աշխարհագրական դիրք)

4. այլ հանգամանքներ (կլիմայական պայմաններ, տնտեսական, հասարակական– քաղաքական իրավիճակ, տոնացույց, հոբելյանական տարեթվեր):

Վերը նշվածներից կանգ առնենք **առարկայական** և **միջավայրի** առանձնահատկությունների վրա: Հատկապես դասավանդվող առարկայի առանձնա-հատկություններն ու պահանջները գործնական աշխատանքի կազմակերպման

ժամանակ հաշվի առնելը ուսուցչից պահանջում է արհեստավարժություն։ Բնականաբար, տարբեր մոտեցումներ են պահանջում հումանիտար և բնագիտա-մաթեմատիկական առարկաները։ Փորձենք օրինակներով ներկայացնել մի քանի ընդհանրացված դիտարկումներ այս առնչությամբ։ **Լեզուներից** (հայերեն, ռուսերեն, օտար լեզու) իրականացվող գործնական աշխատանքները լավագույնս ներկայացվում են գծապատկերների, թեմատիկ պաստառների, սլայդների տեսքով։ Սովորողին կարելի է ուղղորդել մամուլ, հեռուստատեսություն, գովազդ, կենցաղ (առօրյա խոսք), գեղարվեստական գրականություն՝ խրախուսելով կատարել ուսումնասիրություններ որևէ նախընտրելի ոլորտում։ Լեզուն ամենուր է, և այստեղ լավագույնս կարելի է իրականացնել **համատեղող** գործնական աշխատանքներ։

Բնագիտական առարկաների (քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն, աշխարահագրություն) գործնական աշխատանքները թերևս ամենապահանջվածն են։ Գործնական աշխատանքների իրականացման ամենաբազմազան հնարավորություններ ընձեռում են հենց այս առարկաները՝ լաբորատոր և վիրտուալ փորձեր, չափագրումներ, հավաքածուների կազմում, տեղանքի զննություն, ուսումնական ֆիլմի ստեղծում և այլն։

Գրականություն, պատմություն, հասարակագիտություն առարկաներից հանձնարարվող գործնական աշխատանքները կազմակերպելիս ցանկալի է սովորողին կենտրոնացնել սեփական անձի, ընտանիքի, սեփական երկրի խնդիրների ու պրոբլեմների վրա։ Կարևոր է, նույնիսկ անհրաժեշտ, որ նմանօրինակ գործնական աշխատանքների պարտադիր բնութագրիչ դառնան օգտակարությունն ու արդիականությունը։ Ինչու՞ եմ կատարում տվյալ գործնականը, գնահատականից բացի ի՞նչ է տալիս ինձ այն, որքանո՞վ է օգնում ինձ կյանքում՝ լուծելու այս կամ այն խնդիրը։ Այս հարցերի պատասխանը սովորողի համար պիտի լինի առարկայական։ Գործնական աշխատանքի՝ սովորողի անձի համար օգտակար լինելու գործոնը կարելի

է ծառայեցնել հենց այս առարկաներից հանձնարարվող գործնականների արդյունավետ կատարմանը։

Միջավայրի առանձնահատկությունները ոչ պակաս կարևոր գործոն են գործնականները կազմակերպելու ընթացքում։ Հեռավոր գյուղական դպրոցում, որը չունի լաբորատորիա, համակարգչային դասարան, պրոյեկտոր (տեսացրիչ), պատշաճ կահավորված դահլիճ, բնականաբար, չեն կարող իրականացվել որոշակի տիպի գործնականներ։ Այս պայմաններում գործնական աշխատանքները կարող են տեղափոխվել տնամերձ հողամաս, անասնապահական ֆերմա, մոտակա գետի, լճի ափ, բլրի գագաթ և այլն։ Գործնական աշխատանքների կատարման ժամանակ, երբ կարևորվում են սեփական տունը, հողամասը, գյուղը, բակը, քաղաքը, ընտանիքը, հոբբին, դրանք դառնում են միջոց ու միջավայր՝ իրականացնելու գործնական աշխատանքը։ Մեզանում դասասենյակից դուրս չեն պատկերացնում ուսումնական գործընթացը։ Սա հանգեցնում է մեկուսացման. իսկ երբ գիտելիքը օգտակար է, նպաստում է՝ լուծելու կենցաղային տարբրական խնդիրներ, պատասխանում է դեռահասին հուզող բազմաթիվ հարցերի, սովորողը կարևորում է այդ գիտելիքը։ Գործնական աշխատանքը դառնում է կյանքն ու դպրոցը իրար կապող օղակ։ Չափազանցված չէ, բայց դասագրքային իմացությունից այն կողմ աշակերտը պատկերացում անգամ չունի շատ ու շատ պարզագույն երևույթների ու առարկաների մասին։ Հատկապես կենսաբանություն, աշխարհագրություն, ֆիզիկա, նկարչություն առարկաներից գործնականներ հանձնարարելիս ցանկալի է հնարավորինս օգտագործել բնակավայրի ռեսուրսները, ընձեռած հնարավորությունները՝ շեշտադրելով դրանք։

Այսպիսով, մեր աշխատանքի հիմնական նպատակն էր ցույց տալ, թե ինչ անել, ինչպես անել, ինչին դարձնել ուշադրություն, որ որ գործնական աշխատանքները դասի ընթացքում իրականացվեն ամենաարդյունավետ ձևով։ Բայց կա մի հանգամանքևս. արդյոք միայն ցուցումներն ու բնութագրիչները բավական են, որ

ուսուցիչը կազմակերպի այս գործընթացը։ Ցավոք սրտի, ոչ բոլոր ուսուցիչներն են, որ ունեն հարուստ երևակայություն և ստեղծագործական խիզախություն. էլ չենք խոսում առարկայական գիտելիքի ոչ պատշաճ մակարդակի, մատուցելու ճկունության ու պատրաստակամության մասին։ Առաջարկում ենք ուսուցչին տրամադրել գործնական աշխատանքների անցկացման ուղեցույց, որում կլինեն գործնական աշխատանքների առաջարկվող տեսակներ, խորհուրդներ, ուղղորդումներ, Գործնական աշխատանքի ուղեցույցը կլինի օժանդակ ձեռնարկ, որում ցանկալի է՝ լինեն հետևյալ բաժինները.

1. գործնականներ՝ ըստ տարիքային խմբերի
2. գործնականներ՝ ըստ առարկաների
3. գործնականներ՝ ըստ բնակավայրերի (գյուղ, քաղաք, ավան)

Փորձը ցույց է տալիս, որ ուսուցիչները հենց իրենք են դժվարանում ճիշտ կազմակերպել գործնական աշխատանքները, և ուղեցույց–ձեռնարկը կօգնի այս հարցում։

Եզրակացություններ

1. Գործնական աշխատանքը ընթացիկ գնահատման արդյունավետ տեսակ է, բայց դեռևս չի ամրագրվում սովորողի և ուսուցչի գիտակցության մեջ իր արդյունավետ դերով և տեսակարար կշռով։

2. Կան լուրջ բացթողումներ և հրատապ անելիքներ գործնական աշխատանքները դասավանդման ընթացքում ճիշտ ու նպատակային կազմակերպելու հետ կապված։

3. Գործնական աշխատանքի ներդրումը և կազմակերպումը առարկայի դասավանդման ընթացքում լուծում է մի շարք ուսումնական խնդիրներ, ինչպիսիք են գիտելիքի յուրացումը, անցած նյութի կրկնությունն ու ամրակայումը, գիտելիքի գործնական կիրառությունը, հետազոտական ու ստեղծագործական մտքի խթանումը։

Առաջարկություններ

1. Հստակեցնել և համակարգված ներկայացնել գործնական աշխատանքի տեսակները՝ պայմանավորված դասավանդվող առարկայի առանձնահատկություններով։

2. Ուսուցչին տրամադրել **ուղեցույց – ձեռնարկ**, որը կպարունակի գործնական աշխատանքների առաջարկվող տեսակներ, խորհուրդներ, դիտարկումներ։ Բայց դա չի նշանակում, որ ուսուցիչը պիտի սահմանափակվի միայն առաջարկվող օրինակներով։ Հետազոտող մանկավարժը ինքը կարող է կազմել գործնական աշխատանքների ձեռնարկ– ուղեցույց և օգնել գործընկերներին։

3. Վերանայել գործնական աշխատանքների գնահատման չափանիշները։ Գործող գնահատման եղանակը ուղղակի անընդունելի է, քանի որ խիստ սուբյեկտիվ է, տարբերակված չէ խմբային և անհատական, վերարտադրողական և ստեղծագործական բնույթի գործնականների գնահատումը։ Ուսուցչին տրամադրել գործնական աշխատանքի գնահատման հստակ սանդղակ։

4. Գործնական աշխատանքի պահանջները, վերջնարդյունքները հաճախ ուսուցիչը ձևակերպում է բանավոր, և դրա ո՛չ ընթացքը, ո՛չ արդյունք տեսանելի չեն։ Առաջարկվում է ուստարվա սկզբին կազմել գործնական աշխատանքների ծրագիր, որտեղ շարադրված կլինեն գործնական աշխատանքին առնչվող բոլոր տվյալները։

5. Գործնական աշխատանքների կազմակերպումը և իրականացումը կարելի է հանձնարարել ոչ դասավանդող ուսուցչին, այլ տվյալ առարկայի մեկ այլ մանկավարժի, ով կհմտանա ու ավելի կմասնագիտանա հենց գործնական աշխատանքների կազմակերպման մեջ։ Այսկերպ կմեծանա ուսուցիչների համագործակցությունը, պատասխանատվությունը և կարժևորվի գործնական աշխատանքներին լրջորեն տրամադրվելու իրողությունը։

Օգտագործված գրականության ցանկ

1. Հանրակրթական պետական չափորոշիչ, Երևան, 2021։

2. http://resourse.armedu.am/

3. Համացանցային նյութեր, գործնական աշխատանք։

4. Վ. Սուխոմլինսկի, Խորհուրդներ ուսուցչին, «Լույս», Երևան, 1975թ.։

5. Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան, «Մանկավարժություն», ուսումնական ձեռնարկ, Երևան, 2005թ.։